ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՒՂԵՐՁ

N0 7 *30.10.2014թ*

ՈՌՈԳՄԱՆ 5 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ջանգակատուն համայնքի ազգաբնակչության խնդրանքով՝ ուղերձով դիմել ՀՀ Արարատի մարզպետ՝ Ռ.Աբրահամյանին ,ՀՀ վարչապետ՝ Հ.Աբրահամյանին ,ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ՝ Վ.Հակոբյանին,Արարատ ՋՕԸ –ի տնօրեն՝ Խ.Հարությունյանին, բնակչության ունեցած հողերը նպատակային օգտագործելու,այգիներ հիմնելու և հիմնված այսօրվա այգիները նորմալ ոռոգելու համար կատարել ներդրում ,կառուցել նոր 5-կմ –ոց ոռոգման ջրագիծ (D=300մմ),որի շնորհիվ ժողովուրդը կկարողանա լիարժեք մշակել իր ունեցած ներկայիս 150հա հողատարածքները (որոնց ոռոգման ցիկլը տևում է40-45 օր),ստանալ նորմալ բերք (որն էլ միակ ապրուստի միջոցն է մեր ժողովրդի) և դրանով իսկ թեթևացնել իր տնտեսության հոգսերը:Նոր ջրագիծ կառուցելով կնպաստեք, ևս 100 հա վարելահողեր դարձնել ջրովի,գյուղացուն կապել իր հողին,աջակցել սահմանամերձ Ջանգակատուն համայնքի ամրապնդմանը և զարգացմանը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

..... կողմ Հ.Գրիգորյան

..... կողմ Ա.Մայիլյան

..... կողմ Ա.Մարգարյան

Դեմ-0 ձեռնպահ-0

ԿՏ Ջանգակատուն համայնքի ղեկավար Է.Սահակյան